ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ
2015 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2016

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան…… 4

ԲԱԺԻՆ 1.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2015 թվականի
ներդրումային ծրագրի կառուցվածքը……5

ԲԱԺԻՆ 2.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2015 թվականի
ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և
ներդրումների ձևավորման աղբյուրները……8

2.1 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները……8

2.2 Ներդրումների ձևավորման աղբյուրները ……10

ԲԱԺԻՆ 3.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2015 թվականի
ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները ……12

3.1 Սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումներ……12

3.2 Նոր սպառողների միացմանը և հատուկ ծրագրերի
իրականացմանը ուղղված ներդրումներ ……15

3.3 Առևտրային հաշվառման համակարգի բարելավման
ուղղությամբ կատարված ներդրումներ……16

3.4 Բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման
համար այլ ուղղություններով կատարված ներդրումներ ……17

ԲԱԺԻՆ 4.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից
իրականացված գնումների մոնիթորինգի արդյունքները……19

4.1 Ապրանքների շուկայական գների մոնիթորինգ……19

4.2 Աշխատանքների և ծառայությունների
շուկայական գների մոնիթորինգ ……20

ԲԱԺԻՆ 5.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին հետագա սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը……..…..23

5.1 Ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը ……..23

5.2 Անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը……26

5.3 Լուծարված հիմնական միջոցներից նվազեցումներ……27

5.4 Սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը……28

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ……30

Հղումներ օգտագործված նյութերին ……33

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2015 թվականի դեկտեմբերի 16-ի №439Լ որոշումով հաստատված 2016 թվականի աշխատանքային ծրագրի 29-րդ կետի և արտացոլում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2015 թվականի ներդրումային ծրագրի (այսուհետ՝ Ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Վերլուծական տեղեկանքում ներկայացված է Ներդրումային ծրագրի և փաստացի կատարված ներդրումների համադրությունը, դրանց արդյունավետության վերլուծությունը, ինչպես նաև սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը: Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով Ընկերության 2015 թվականի Ներդրումային ծրագիրը [Որոշում 1, Որոշում 2] և վերջինիս կողմից հանձնաժողով ներկայացված հաշվետվություններն ու տեղեկատվությունները [Հաշվետվություն 1], [Տեղեկատվություն 1, 2, 3, 4, 5,6]:

Հաշվի է առնվել նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2016 թվականի հոկտեմբերի 11-ի №04-ԿՀ-05/4077 գրությամբ ներկայացված մեկնաբանություններն ու առաջարկությունները:

ԲԱԺԻՆ 1.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էր տարբեր միջոցառումներ իրականացնել բաշխիչ ցանցերի վերակառուցման և վերազինման ուղղությամբ՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների, էլեկտրամատակարարման հուսալիության և անվտանգության աստիճանի պատշաճ մակարդակի պահպանման նպատակով: Ներդրումներ են նախատեսվել նաև նոր սպառողների միացման և հեռանկարային սպառման պահանջարկի բավարարման նպատակով բաշխիչ ցանցերի ընդլայնման ուղղությամբ, ինչպես նաև առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ: Բացի վերը նշվածը բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով նախատեսվել են ներդրումներ գրասենյակային գույքի, համակարգչային տեխնիկայի, չափիչ սարքերի և գործիքների, ռելեական պաշտպանության ստուգիչ սարքերի, մեքենա-մեխանիզմների ձեռքբերման, արտադրական և վարչական շենքերի ու շինությունների վերակառուցման ուղղությամբ: Ներդրումային ծրագրում ներառվել են նաև նախորդ ժամանակահատվածում ներդրումային ծրագրերից դուրս իրականացված և Ընկերության լիցենզավորված գործունեությանը մասնակցող ներդրումները: Ներդրումային ծրագրի ընդհանուր ծավալը կազմել է 8 334,7[1] մլն դրամ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է Ընկերության Ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

[1] Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը:

Գրաֆիկ 1



Ինչպես երևում է Գրաֆիկ 1-ից, ներդրումների հիմնական մասընախատեսված էր նոր սպառողների միացման և բաշխիչ ցանցերի ընդլայնման նպատակով հատուկ ծրագրերի իրականացման ուղղությամբ: Մասնավորապես ներդրումների 37%-ը նախատեսված էր նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման, իսկ 16%-ը՝ Երևան քաղաքում «Պուրակ» 35/6 կՎ լարման ենթակայանի վերակառուցում հատուկ ծրագրի իրականացման և այլ անձանց պատկանող բաշխիչ ցանցերի ձեռք բերման ուղղությամբ:

Ներդրումների հաջորդ հիմնական հատվածը՝ շուրջ 26%-ը, նախատեսված էր ուղղել սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը՝ մալուխային, օդային գծերի և ենթակայանների վերակառուցմանն ու վերազինմանը, բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրամատակարարման ցանցի բարելավմանը, ինչպես նաև Երևան քաղաքում և մարզերում թվով 36 հատուկ հասցեական աշխատանքների իրականացմանը:

Առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ, որին բաժին է ընկնում ներդրումային ծրագրի ծավալների 5%-ը, նախատեսված էր փոխարինել կամ տեղակայել նոր հաշվիչներ և հաշվիչի արկղեր՝ էլեկտրաէներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով դրանց ներկայացվող պահանջների ապահովման նպատակով: Նախատեսվում էր համալրել հաշվիչների ստուգաչափման լաբորատորիան, ինչպես նաև շարունակել էլեկտրաէներգիայի հաշվառման համակարգի ավտոմատացման աշխատանքները:

Ներդրումային ծրագրի՝ բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներով, որոնք կազմում են 769,0 մլն դրամ կամ ընդհանուր ներդրումների 9%-ը, նախատեսված էին հետևյալ միջոցառումները.

- գրասենյակային գույքի ձեռքբերում՝ 38,0 մլն դրամ,
- համակարգչային տեխնիկայի, համալրող սարքավորումների ձեռքբերում և ERP համակարգի ներդրում՝ 159,9 մլն դրամ,
- չշահագործվող տրանսպորտային միջոցների ամբողջական վերականգնում՝ 38,0 մլն դրամ,
- վարչական շենքերի և շինությունների վերակառուցում 25,0 մլն դրամ,
- չափիչ սարքերի, անվտանգության պարագաների և գործիքների ձեռքբերում՝ 63,0 մլն դրամ,
- ռելեական պաշտպանության ստուգիչ սարքերի ձեռքբերում՝ 62,0 մլն դրամ,
- լարման տրանսֆորմատորների փորձարկման վահանի ձեռքբերում՝ 15,1 մլն դրամ,
- կարգավարական ծառայության համար հեռախոսային խոսակցությունների ձայնագրման սարքավորանքների ձեռքբերում՝ 10,0 մլն դրամ,
- ուսումնական վարժադաշտի կառուցում 2,7 մլն դրամ,
- մեքենա-մեխանիզմների ձեռքբերում՝ 298,3 մլն դրամ,
- մեքենաների վրա գազաբալոնային համակարգերի տեղադրում՝ 57,0 մլն դրամ:

Նախորդ ժամանակահատվածում ներդրումային ծրագրերից դուրս իրականացված և Ընկերության լիցենզավորված գործունեությանը մասնակցող 545,3 մլն դրամի ներդրումներ ևս ներառվել են Ներդրումային ծրագրում:

ԲԱԺԻՆ 2.
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները

2.1 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն Ընկերության փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվության՝ 2015 թվականի ընթացքում իրականացվել են 6 936,8 մլն դրամի ներդրումներ: Նշված ծավալում Ընկերությունը ներառել է նաև ներդրումային ծրագրով չնախատեսված 654,5 մլն դրամի աշխատանքներ, որից 42,7 մլն դրամը՝ անհետաձգելի աշխատանքներ, իսկ 17,8 մլն դրամը՝ բաժանորդների դիմում-բողոքների հիման վրա իրականացված աշխատանքներ: Նշված ծավալում ներկայացված են սարքավորումների, արկղերի, համակարգչային տեխնիկայի նորոգումների և ծրագրային փաթեթների ձեռքբերման ուղղությամբ 594,0 մլն դրամի աշխատանքներ, որոնք հանդիսանում են սակագնի ծախսային հոդվածների տարեր:

Հաշվի առնելով որ Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն համայնքի Ղռաջներ թաղամասում իրականացված ներդրումները (դիմում-բողոք), համաձայնեցվել և իրականացվել են 2014 թվականի ընթացքում, սակայն շահագործման են հանձնվել 2015 թվականի առաջին եռամսյակում, ուստի դրանք, ինչպես նաև Ընկերության կողմից իրականացված անհետաձգելի աշխատանքները նույնպես դիտարկվել են սակագնով փոխհատուցման տեսանկյունից:

Այսպիսով, Ընկերության կողմից 2015 թվականի համար հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների հետ համադրելի իրականացված ներդրումների ծավալը կազմել է 6 281,5 մլն դրամ, որն էլ դիտարկվել է Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշների վերլուծության ընթացքում: Նշված ծավալից շահագործման հանձնված հիմնական միջոցների արժեքը կազմել է 5 447,7 մլն դրամ, իսկ մնացած 833,8 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Ստորև աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումների ուղղությունները	Հանձնաժողովի հետ համաձայնեցված 2015 թվականի ներդրումների կանխատեսվող ծավալը		2015 թվականի ընթացքում փաստացի ավարտված ներդրումների ծավալը		Ներդրու-մային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%
1	Սպասարկման որակի ցուցանիշների բարելավում	2 208.2	26.5%	1 297.4	23.8%	58.8%
2	Նոր սպառողների միացում և հատուկ ծրագրերի իրականացում	4 412.3	52.9%	2 886.0	53.0%	65.4%
3	Առևտրային հաշվառման համակարգի բարելավում	399.9	4.8%	413.2	7.6%	103.3%
4	Գրասենյակային գույքի ձեռքբերում	38.0	0.5%	36.7	0.7%	96.5%
5	Համակարգչային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերում	159.9	1.9%	116.8	2.1%	73.0%
6	Վարչական շենքերի և շինությունների վերակառուցում	25.0	0.3%	17.6	0.3%	70.5%
7	Մեքենա-մեխանիզմների ձեռքբերում	298.3	3.6%	-	0.0%	0.0%
8	Այլ ներդրումներ	247.8	3.6%	130.0	2.4%	52.4%
9	Նախորդ ժամանակահատվածում ներդրումային ծրագրից դուրս իրականացված ներդրումներ	545.3	6.5%	550.0	10.1%	100.9%
10	**Ընդամենը**	**8 334.7**	**100%**	**5 447.7**	**100%**	**65.4%**

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 1-ից, Ներդրումային ծրագիրն Ընկերությունը կատարել է 65,4%-ով: Ինչպես նախատեսված էր ներդրումային ծրագրով՝ ներդրումների զգալի մասը՝ 53%-ը ուղղվել է նոր սպառողների միացմանը և բաշխիչ ցանցերի ընդլայնման նպատակով հատուկ ծրագրերի իրականացմանը:

2.2 Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև ներկայացված է 2015 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացված ներդրումների (անավարտ և ավարտված) ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2
(մլն դրամ)

N	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Ավարտված և անավարտ աշխատանքների արժեքը		Ավարտված աշխատանքների արժեքը	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ	1 225.6	19.5%	1 225.6	22.5%
2	Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներ	1 570.5	25.0%	1 186.2	21.8%
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներ	243.4	3.9%	240.8	4.4%
4	Նախագծային աշխատանքների ուղղությամ ծախսումներ	283.2	4.5%	122.4	2.2%
5	Ոչ նյութական ակտիվներ	35.5	0.6%	35.5	0.7%
6	Սեփական ուժերով կատարված աշխատանքներ, այդ թվում՝	2 923.4	46.5%	2 637.1	48.4%
6.1	*աշխատանքի վճարման գծով ծախսումներ*	*238.1*	*3.8%*	*236.3*	*4.3%*
6.2	*նյութական ծախսումներ*	*1 780.6*	*28.3%*	*1 507.9*	*27.7%*
6.3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	*811.5*	*12.9%*	*799.8*	*14.7%*
6.4	*այլ ծախսումներ*	*93.2*	*1.5%*	*93.1*	*1.7%*
7	**Ընդամենը**	**6 281.5**	**100%**	**5 447.7**	**100%**

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 2-ից, շահագործման հանձնված հիմնական միջոցների 22,5%-ը նախորդ ժամանակաշրջանի անավարտ աշխատանքներն են: Հարկ է նշել, որ նախորդ տարվա վերջում այս տոկոսադրույքը կազմել էր 23,2%: Մյուս հատկանշական փաստը դա սեփական ուժերով և կապալառու կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների հարաբերակցության փոփոխությունն է ի օգուտ սեփական ուժերով կատարվող աշխատանքների: Մասնավորապես 2013 թվականի ընթացքում սեփական ուժերով

իրականացված աշխատանքների արժեքը կազմել էր ամբողջ ներդրումների 36%-ը, իսկ 2014 թվականին՝ 44%-ը: Ինչպես տեսնում ենք 2015 թվականի ընթացքում սեփական ուժերով իրականացված աշխատանքների արժեքը կազմել է իրականացված ներդրումների 48,4%-ը:

ԲԱԺԻՆ 3.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

3.1 Սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումներ

Սպասարկման որակի բարելավման նպատակով Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսվում էր իրականացնել 2 208,2 մլն դրամի ներդրումներ՝ բաշխիչ ցանցերի լարման տարբեր մակարդակներում օդային և մալուխային գծերի, ենթակայանների վերանորոգման և վերակառուցման, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրական ցանցերի բարեկարգման նպատակով: Փաստացի իրականացվել են 1 426,1 մլն դրամի աշխատանքներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 1 297,4 մլն դրամի հիմնական միջոցներ:

Ընկերության էլեկտրամատակարարման հուսալիության ցուցանիշների ուսումնասիրությունը [Տեղեկատվություն 3] ցույց է տալիս, որ էլեկտրական ցանցերում անջատումները հիմնականում բաժին են ընկնում 0,4-6(10) կՎ լարման ցանցերին: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ 2015 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումների 79%-ը նախատեսվել էր իրականացնել 0,4-6(10) կՎ լարման բաշխիչ ցանցերում, որտեղ 2015 թվականին իրականացված ներդրումներից շահագործման են հանձնվել 945,6 մլն դրամի հիմնական միջոցներ, որը կազմում է այս ուղղությամբ իրականացված ընդհանուր ներդրումների 73%-ը:

Սպասարկման որակի ցուցանիշների բարելավման ուղղությամբ Ընկերության 2015 թվականի ներդրումային գործունեության արդյունքները գնահատելու նպատակով համեմատվել է 0,4-6(10) կՎ լարման ցանցերում 2014-2015 թվականների ընթացքում գրանցված հրաժարումների քանակը [Տեղեկատվություն 5]: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ եթե 2014 թվականի ընթացքում գրանցվել է 3 960 հրաժարում, ապա 2015 թվականին հրաժարումների թիվը աճել է 36,5%-ով և կազմել է 5 407: Աճել է նաև ընդհանուր համակարգի (լարման բոլոր

մակարդակներում) հրաժարումների թիվը նույնպես՝ 4 429 հրաժարումից կազմելով 5 989 (35,2%):

Հարկ է նշել, որ բաշխման ցանցի էլեկտրակայանքների հուսալիության փաստացի ցուցանիշների վատթարացումը արտացոլվել է նաև հոսանքազրկումների միջին հաճախության (հոսանքազրկում/բաժանորդ) և տևողության (րոպե/բաժանորդ) ցուցանիշների վրա, որոնք 2014 թվականի համեմատ համապատասխանաբար աճել են՝ 10,3%-ով և 18,6%-ով (ավելի մանրամասն ներկայացված է աղյուսակ 3-ում): Իսկ հոսանքազրկումների վերականգնման միջին տևողությունը 2014 թվականի համեմատ (3,0 ժամ/ ընդհատում) նվազել է՝ կազմելով 2,98 ժամ/ընդհատում:

Աղյուսակ 3

Սպասարկման տարածքը	Հոսանքազրկումների միջին հաճախություն				Հոսանքազրկումների միջին տևողություն			
	Չափի միավոր	2014թ. փաստ.	2015թ. փաստ.	2014թ.փաստ. 2015 թ. փաստ. նկատմամբ	Չափի միավոր	2014 թ. փաստ.	2015 թ. փաստ.	2014 թ.փաստ. 2015 թ. փաստ. նկատմամբ
Երևան	հոսանքա-զրրկում/բաժանորդ	3,5	3,0	13,9%	րոպե/բաժանորդ	208,0	175,8	15,5%
Արարատ	հոսանքա-զրրկում/բաժանորդ	0,3	0,3	18,4%	րոպե/բաժանորդ	15,4	23,3	-51,1%
Վայոց Ձոր	հոսանքա-զրրկում/բաժանորդ	0,5	1,3	-143,6%	րոպե/բաժանորդ	50,2	152,8	-204,3%
Արագածոտն	հոսանքա-զրրկում/բաժանորդ	4,9	3,2	34,3%	րոպե/բաժանորդ	676,9	414,2	38,8%
Արմավիր	հոսանքա-զրրկում/բաժանորդ	5,1	4,5	11,3%	րոպե/բաժանորդ	533,2	543,8	-2,0%
Կոտայք	հոսանքա-զրրկում/բաժանորդ	4,5	7,7	-72,7%	րոպե/բաժանորդ	397,0	644,1	-62,3%
Գեղարքունիք	հոսանքա-զրրկում/բաժանորդ	4,8	9,9	-105,3%	րոպե/բաժանորդ	441,5	1048,3	-137,4%
Տավուշ	հոսանքա-զրրկում/բաժանորդ	2,2	2,6	-17,5%	րոպե/բաժանորդ	210,5	221,6	-5,3%
Շիրակ	հոսանքա-զրրկում/բաժանորդ	2,2	2,2	-0,7%	րոպե/բաժանորդ	188,7	220,8	-17,0%
Սյունիք	հոսանքա-զրրկում/բաժանորդ	2,1	1,3	36,6%	րոպե/բաժանորդ	249,6	161,3	35,4%
Լոռի	հոսանքա-զրրկում/բաժանորդ	5,8	6,1	-3,6%	րոպե/բաժանորդ	446,1	565,3	-26,7%
Ընդամենը ՀՀ	**հոսանքա-զրրկում/բաժանորդ**	**3,6**	**3,9**	**-10,3%**	**րոպե/բաժանորդ**	**291,4**	**345,7**	**-18,6%**

Այս ուղղությամբ ներդրումային ծրագրի շրջանակում 264,6 մլն դրամի ներդրումներ են իրականացվել 35 և 110 կՎ լարման բաշխիչ ցանցերի և ևս 174,2 մլն դրամ տարբեր լարման ենթակայանների շենքերի վերակառուցման ենթաուղղություններով:

Նախատեսված էր նաև 200,0 մլն դրամի ներդրումներ իրականացնել բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրական ցանցի բարեկարգման

նպատակով: Ներդրումներն իրականացվել են 147,1 մլն դրամ ծավալով, որից Երևան քաղաքում 140,8 մլն դրամով 105 շենքերում բարեկարգվել են 262 մուտքեր: Եվս 6,3 մլն դրամի ներդրումներ են իրականացվել նաև Լոռու, Սյունիքի և Կոտայքի մարզերում:

Հատուկ ծրագերերի ենթաուղղությամբ Ներդրումային ծրագրով նախատեսված էր 455,0 մլն դրամով իրականացնել թվով 29 հասցեական աշխատանքներ, սակայն իրականացվել է 41,9 մլն դրամի ներդրումներ, որով վերակառուցվել է Կոտայքի մարզի Նոր Գյուղ համայնքի 04-6(10) կՎ ցանցը և Տավուշի մարզ «Վազաշեն» 10 կՎ օդային գծի «Գ-Դ» հատվածը: Մնացած 27 հասցեական աշխատանքների ուղղությամբ ներդրումներ չեն իրականացվել:

Հոսանքազրկումների միջին տևողության և հաճախականության ցուցանիշների պահպանման, անվտանգության ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությամբ Ներդրումային ծրագիրը գերազանցվել է 126,2 մլն դրամով՝ հետևյալ ենթաուղղություններով.

- 0,4 կՎ մալուխային գծերի վերակառուցում ենթաուղղությամբ՝ 39,7 մլն դրամով,
- 10 կՎ օդային գծերի վերակառուցում ենթաուղղությամբ՝ 60,1 մլն դրամով,
- 6(10) կՎ լարման տրանսֆորմատորների փոխարինում և տեղակայում ենթաուղղությամբ՝ 1,3 մլն դրամով,
- 110 կՎ ուժային տրանսֆորմատորի տեղադրում՝ 0,8 մլն դրամով,
- ենթակայանների շենքերի վերակառուցում ենթաուղղությամբ՝ 24,3 մլն դրամով:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից մատակարարվող էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախության (լարման շեղում/բաժանորդ) և տևողության (ժամ/բաժանորդ) ցուցանիշներին ապա ինչպես երևում է աղյուսակ 4-ից՝ գրեթե ամբողջ հանրապետությունում այդ ցուցանիշները 2014 թվականի համեմատ վատթարացել են: Այս ցուցանիշների վատթարացումը հատկապես նկատելի է Լոռու (44,9% և 43,5%) և Սյունիքի (23,1% և 24,1%) մարզերում: Այս համատեքստում հարկ է նշել, որ վերջին հինգ տարիներին այս ուղղությամբ գրեթե ներդրումներ չեն իրականացվել և 2015 թվականի Ներդրումային ծրագրով

նախատեսված 7 հասցեական աշխատանքներից իրականացվել են միայն՝ Երևան քաղաքի Նոր Խարբերդի ձորի 4-րդ փողոցի և Արարատի մարզի Հովտաշատ համայնքի 6(10)-0,4 կՎ լարման ցանցերի վերակառուցման աշխատանքները: Ուստի ներդրումների նման ցածր մակարդակի պարագայում ցուցանիշների վատթարացումը տրամաբանական էր:

Աղյուսակ 4

Սպասարկման տարածքը	Էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախություն				Էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին տևողություն			
	Չափի միավոր	2014 թ. փաստ.	2015 թ. փաստ.	2014 թ. փաստ. 2015 թ. փաստ. նկատմամբ	Չափի միավոր	2014 թ. փաստ.	2015 թ. փաստ.	2014 թ. փաստ. 2015 թ. փաստ. նկատմամբ
Երևան	լարման շեղում/բաժանորդ	11.4	10.7	6.4%	ժամ/բաժանորդ	2 270.1	2 073.2	8.7%
Արարատ	լարման շեղում/բաժանորդ	16.6	17.4	-4.7%	ժամ/բաժանորդ	3 246.6	3 343.7	-3.0%
Վայոց Ձոր	լարման շեղում/բաժանորդ	10.7	11.2	-4.7%	ժամ/բաժանորդ	1 947.1	2 027.8	-4.1%
Արագածոտն	լարման շեղում/բաժանորդ	16.0	18.2	-14.1%	ժամ/բաժանորդ	3 034.2	3 396.0	-11.9%
Արմավիր	լարման շեղում/բաժանորդ	14.2	13.4	5.5%	ժամ/բաժանորդ	2 675.1	2 444.5	8.6%
Կոտայք	լարման շեղում/բաժանորդ	11.3	11.4	-0.5%	ժամ/բաժանորդ	2 185.5	2 120.6	3.0%
Գեղարքունիք	լարման շեղում/բաժանորդ	13.8	15.1	-9.2%	ժամ/բաժանորդ	2 583.1	2 810.5	-8.8%
Տավուշ	լարման շեղում/բաժանորդ	11.0	13.9	-26.6%	ժամ/բաժանորդ	2 115.4	2 608.2	-23.3%
Շիրակ	լարման շեղում/բաժանորդ	15.1	15.0	0.8%	ժամ/բաժանորդ	2 983.9	2 826.5	5.3%
Սյունիք	լարման շեղում/բաժանորդ	8.8	10.8	-23.1%	ժամ/բաժանորդ	1 560.1	1 936.6	-24.1%
Լոռի	լարման շեղում/բաժանորդ	8.0	11.6	-44.9%	ժամ/բաժանորդ	1 583.4	2 272.2	-43.5%
Ընդամենը ՀՀ	**լարման շեղում/բաժանորդ**	**12.2**	**12.7**	**-4.1%**	**ժամ/բաժանորդ**	**2 366.8**	**2 404.6**	**-1.6%**

Մատակարարվող էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության ցուցանիշների ուղղությամբ բնակիչների դիմում-բողոքների և Ընկերության կողմից իրականացված ուսումնասիրությունների հիման վրա նախատեսված հասցեական աշխատանքներից 5-ում որևէ ներդրում չի իրականացվել:

3.2 Նոր սպառողների միացմանն և հատուկ ծրագրերի իրականացմանն ուղղված ներդրումներ

Նոր սպառողների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ուղղությամբ 2015 թվականին նախատեսվում էր ներդնել 3 100,0 մլն դրամ:

Իրականացվել է 3 285,8 մլն դրամի ներդրումներ, որից փաստացի շահագործման են հանձնվել 2 837,6 մլն դրամի հիմնական միջոցներ: Արդյունքում՝ 2015 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին են միացվել 2 961 նոր բաժանորդներ: Այս ծավալում 268,5 մլն դրամի ներդրումները դեռևս չեն մասնակցում լիցենզավորված գործունեությանը քանի որ դրանց իրականացման արդյունքում էլեկտրական ցանցին նոր բաժանորդներ չեն միացել:

Հարկ է նաև նշել, որ ցանցին միացված նոր բաժանորդների մասով ընկերության կողմից գանձվել են 601,1 մլն դրամի միացման վճարներ, որոնք ենթակա են նվազեցման ներդրումների ծավալից:

Հատուկ ծրագրերի իրականացման ուղղությամբ 2015 թվականին նախատեսված էր ներդնել 1 262,3 մլն դրամ՝ «Պուրակ» 35/6 կՎ ենթակայանի վերակառուցման նպատակով: Այս ենթաուղղությամբ փաստացի ներդրումներ չեն իրականացվել:

Եվս 50,0 մլն դրամ նախատեսված էր այլ անձանց պատկանող բաշխիչ ցանցերի ձեռքբերման համար: Այս ենթաուղղությամբ ձեռք են բերվել 48,5 մլն դրամի հիմնական միջոցներ:

3.3 Առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի հաջորդ՝ առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 399,9 մլն դրամի ներդրումներ: Այդ նպատակով պետք է փոխարինվեին հետագա շահագործման համար ոչ պիտանի հաշվիչները և դրանց համար նախատեսված արկղերը, պետք է իրականացվեր հաշվիչների ստուգաչափման լաբորատորիայի համալրում և կատարելագործվեր առևտրային հաշվառման համակարգը՝ տեղադրվեին և փոխարինվեին տեղեկատվության ավտոմատ փոխանցման սարքավորումներ:

Համաձայն ներկայացված հաշվետվության, այս ուղղությամբ ընկերության կողմից շահագործման հանձնված ներդրումները կազմել են 413,2 մլն դրամ, այդ թվում՝

- հաշվիչների փոխարինման նպատակով՝ 262,6 մլն դրամ, որից 111,4 մլն դրամը սպառողների համար միաֆազ, 88,6 մլն դրամը եռաֆազ էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների տեղակայման նպատակով, իսկ 62,7 մլն դրամի հաշվիչներ տեղադրվել են կանխավճարային սկզբունքով՝ բաժանորդների դիմումների հիման վրա,
- հաշվիչների արկղերի փոխարինման նպատակով՝ 76,2 մլն դրամ,
- 35-110 և 0,4-10 կՎ լարման ցանցերում էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի համալրման նպատակով՝ 74,3 մլն դրամ:

Հաշվիչների ստուգաչափման լաբորատորիայի համալրման ուղղությամբ որևէ ներդրում չի իրականացվել:

Այս ուղղությամբ Ներդրումային ծրագրից դուրս տեղադրված կանխավճարային սկզբունքով տեղադրված հաշվիչների ենթաուղղությամբ իրականացված 62,7 մլն դրամը կներառվի սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալում՝ հաշվի առնելով բաժանորդների դիմումների քանակի անկախատեսելիությունը:

35-110 և 0,4-10 կՎ լարման ցանցերում էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի համալրման ենթաուղղությամբ ավարտված ներդրումները 40,3 մլն դրամով գերազանցել են Ներդրումային ծրագրով համաձայնեցված ներդրումների ծավալը:

3.4 Բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի այս ուղղությունով նախատեսվում էր.

- գրասենյակային գույքի ձեռքբերում՝ 38,0 մլն դրամ արժեքով: Այս նպատակով փաստացի ձեռք են բերվել 36,7 մլն դրամի ապրանքներ,
- համակարգչային տեխնիկայի, ծրագրերի (ERP) և համալրող սարքավորումների ձեռքբերում՝ 159,9 մլն դրամ արժեքով: Փաստացի ձեռք են բերվել 81,3 մլն դրամի համակարգիչներ, մոնիթորներ, անխափան սնուցման և այլ համալրող սարքավորումներ, ևս 35,5 մլն դրամ ուղղվել է ERP համակարգի ներդրմանը,

- չշահագործվող տրանսպորտային միջոցների ամբողջական վերականգնում՝ ընդհանուր 38,0 մլն դրամ արժեքով: Փաստացի 31,2 մլն դրամ ներդրվել է 22 բեռնատար մեքենա-մեխանիզմների և հատուկ տեխնիկայի ամբողջական վերականգնման ուղղությամբ,
- վարչական շենքերի և շինությունների վերակառուցում՝ 25,0 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ 2015 թվականի ընթացքում ներդրվել է 17,6 մլն դրամ,
- չափիչ սարքերի, անվտանգության պարագաների և գործիքների ձեռքբերում՝ 63,0 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ ձեռք են բերվել 62,1 մլն դրամի չափիչ սարքեր, անվտանգության պարագաներ և գործիքներ,
- ռելեական պաշտպանության ստուգիչ սարքերի ձեռքբերում՝ 62,0 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ ձեռք են բերվել 14,9 մլն դրամի ստուգիչ սարքեր,
- լարման տրանսֆորմատորների փորձարկման վահանի ձեռքբերում՝ 15,1 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ ներդրումներ չեն իրականացվել,
- կարգավարական ծառայության համար հեռախոսային խոսակցությունների ձայնագրման սարքավորանքների ձեռքբերում՝ 10,0 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ իրականացվել են 5,4 մլն դրամի ներդրումներ,
- ուսումնական վարժադաշտի կառուցում՝ 2,7 մլն դրամ արժեքով: Ներդրումների փաստացի ծավալը կազմել է 7,9 մլն դրամ: Ներդրումային ծրագիրը այս ենթաուղղությամբ գերազանցվել է 5,2 մլն դրամով:
- մեքենա-մեխանիզմների ձեռքբերում ՝ 298,3 մլն դրամ: Այս ուղղությամբ որևէ մեքենա-մեխանիզմ ձեռք չի բերվել,
- մեքենաների վրա գազաբալոնների տեղադրում՝ 57,0 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ 8,4 մլն դրամով 21 հատ մեքենաների վրա տեղադրվել են գազաբալոնային համակարգ:

ԲԱԺԻՆ 4.
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի իրականացված գնումների մոնիթորինգի արդյունքները

4.1 Ապրանքների շուկայական գների մոնիթորինգ

Ընկերության կողմից ձեռք բերված ապրանքների և սարքավորումների շուկայական գների մոնիթորինգը ցույց է տալիս, որ դրանց ձեռքբերման գները միջինում 24,4%-ով գերազանցում են շուկայականը: Նման գերազանցումները, մեր կարծիքով, հետևանք են մի շարք գործոնների՝ մասնավորապես.

ա) մատակարարված ապրանքների դիմաց Ընկերության կողմից վճարումներ կատարելու ժամկետները սահմանվել է 90 բանկային օր, ինչը մատակարարների մոտ առաջացնում է կապիտալի ներգրավման լրացուցիչ ծախսեր: Սա ևս ապրանքների գների թանկացմանը հանգեցնող լրացուցիչ գործոն է: Եթե տեղական շուկայում առկա կարճաժամկետ վարկերի միջին տարեկան տոկոսադրույքն ընդունենք 18-20%, ապա միայն այս գործոնի կշիռը կկազմի 6-7%,

գ) միջնորդ կազմակերպությունների կարողությունները արտաքին շուկաների ուսումնասիրության և այդ շուկաներում ներկայանալու ներուժի առումով անհամեմատ սահմանափակ են քան Ընկերությանը, ինչը ևս իր ազդեցությունն է ունենում ապրանքների ձեռքբերման գների և արտադրողների ընտրության հարցում,

զ) Ընկերությունը մինչև գնման հայտարարության հրապարակումը չի իրականացրել շուկայի ուսումնասիրություն՝ պահանջվող ապրանքի բոլոր հնարավոր խոշոր մատակարարներին հայտնաբերելու, նրանց առաջարկությունների որակի մասին հաճախորդների կարծիքներն ուսումնասիրելու, գնային տիրույթի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և վերջին հաշվով գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ճիշտ ընտրություն կատարելու նպատակով,

է) Ընկերության կողմից գնումների պատշաճ պլանավորում չի իրականացվել: Մրցույթային եղանակով ձեռք բերված գնումներից բացի Ընկերությունը նույն ապրանքները ձեռք է բերել նաև ուղղակի գնումների միջոցով:

4.2 Աշխատանքների և ծառայությունների շուկայական գների մոնիթորինգ

Սեփական ուժերով և կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների ընտրանքային մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ դրանց գները միջինում 35,5%-ով գերազանցում են շուկայականը: Նշված գերազանցումները հետևանք են մի շարք գործոնների՝ մասնավորապես.

ա) Ընկերության կողմից ոչ միշտ են կապալառուին տրամադրվում աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութերը և սարքավորումները, որի արդյունքում դրանց արժեքի նկատմամբ կապալառուները կիրառում են վերադիր ծախսեր և շահույթ, ինչը կապալառուների տեսանկյունից բնական է: Սակայն այդ նյութերն ու սարքավորումներն Ընկերության կողմից տրամադրելու դեպքում դրանց նկատմամբ կապալառուների կողմից վերադիր ծախսերի և շահույթի լրացուցիչ տոկոսներ չէին հաշվարկվի,

բ) կապալառուների կողմից այդ աշխատանքների իրականացման նպատակով մանրածախ շուկայից ձեռքբերվող ապրանքների գները բարձր են Ընկերության կողմից կենտրոնացված կարգով կատարվող գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների գներից:

գ) հաղորդալարերի և մալուխների ձեռքբերման գները մոտ 43,7%-ով գերազանցում են դրանց շուկայական գները:

Նախագծման աշխատանքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նախագծող կազմակերպությունների ծառայության արժեքը հաշվարկվում է ելնելով նախահաշվային արժեքից: Այսինքն, նախագծող կազմակերպության ծառայության արժեքը ուղիղ համեմատական է նախահաշվի արժեքին: Նշված հանգամանքը կարող է դրդապատճառ հանդիսանալ նախագծող կազմակերպությունների կողմից՝ իրենց եկամուտները մեծացնելու նպատակով, աշխատանքների նախահաշվային արժեքների անհիմն ուռճացման: Այս ենթադրությունը հավաստում է նաև Ընկերության ներկայացրած տեղեկատվության [Տեղեկատվություն 1] ուսումնասիրությունը՝ համաձայն որի նախահաշվային արժեքները միջինում 42,8%-ով գերազանցում են փաստացի աշխատանքների արժեքը: Հաշվի առնելով, որ փաստացի իրականացված շինարարական

աշխատանքների արժեքը նախահաշվային արժեքից գործնականում կարող է ունենալ մինչև 20% շեղում, ուստի կարելի է ենթադրել, որ Ընկերությունը 22,8%-ի չափով ավել վճարում է կատարել նախագծող կազմակերպություններին:

Ներդրումային ծրագրի շրջանակում Ընկերությունը 2015 թվականի ընթացքում նախագծող կազմակերպություններին վճարել է 322,8 մլն դրամ, որից 183,1 մլն դրամի նախագծեր շահագործման չեն հանձնվել: Շահագործման հանձնված 139,7 մլն դրամի նախագծերից 13,5 մլն դրամը նվազեցվել է դրանց հետ կապված աշխատանքներ չիրականացնելու կամ մասնակի (մինչև 30%) իրականացնելու (դեռևս չեն մասնակցում լիցենզավորված գործունեությանը) պատճառով: Իսկ մնացած 126,2 մլն դրամ նախագծային ծախսերի 22,8%-ը՝ 28,8 մլն դրամը համարվել է նախագծող կազմակերպությունների մասով անարդյունավետ ծախս և նվազեցվել է սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից: Շահագործման հանձնված նախագծային աշխատանքներից ևս 0,3 մլն դրամ նվազեցվել է նոր սպառողների ուղղությամբ իրականացված ներդրումների նվազեցման արդյունքում՝ նախագծային աշխատանքների հետ կապված դեռևս բաժանորդներ չեն միացել:

Հարկ է նշել նաև, որ Ընկերությունը համաձայն իր ներքին կանոնակարգի նախագծող կազմակերպությունների ընտրությունը պետք է իրականացներ մրցութային եղանակով՝ մրցույթի չափանիշ սահմանելով կատարման ժամկետը: Նշված եղանակը ենթադրում էր նախագծման աշխատանքների կատարման ժամկետների հնարավորինս կրճատում, որն էլ նպատակաուղղված էր նոր սպառողների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ժամկետների կրճատմանը և Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային աղյուսակում Հայաստանի Հանրապետության դիրքի բարելավմանը: Սակայն համաձայն Ընկերության 2015 թվականի հունիսի 3-ի №04-ԵԲ-02/2001 գրության՝ մեկ նախագծող կազմակերպության հետ կնքվել է գլխավոր կապալի պայմանագիր՝ արդյունքում ստեղծելով մենաշնորհ, ինչպես գների սահմանման, այնպես էլ ժամկետների առումով: Այս առնչությամբ Ընկերության գործելաոճը ընդունելի չէ: Հանձնաժողովը բազմիցս նախազգուշացրել է տարբեր գործառույթներում (սարքավորումների և նյութերի ձեռքբերում, կապալառու

կազմակերպությունների կողմից աշխատանքների իրականացում) Ընկերության գործունեության անարդյունավետության վերաբերյալ, սակայն Ընկերությունը նշված թերությունները շտկելու փոխարեն վերացնում է այն չնչին դրական փոփոխությունները, որոնք ձեռք են բերվել կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

ԲԱԺԻՆ 5.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետագա սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

5.1 Ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

Ընկերության կողմից 2015 թվականի ընթացքում փաստացի ավարտված 5 447,7 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա չեն՝ մասնավորապես.

1. նոր սպառողների միացման ուղղությամբ իրականացված ներդրումներից նվազեցվել է 284,7 մլն դրամ հետևյալ պատճառներով՝

   ա) հաշվետվությունում ներառված են 268,5 մլն դրամի աշխատանքներ, որոնք չնայած այն հանգամանքին, որ հանձնված են շահագործման, դրանց իրականացման արդյունքում էլեկտրական ցանցին նոր բաժանորդներ չեն միացել: Ուստի այս ծախսերի կապիտալացումը և ընդհանրապես հաշվետվությունում ներառումը հասկանալի չէ: Նշված ներդրումների Ընկերության սակագնային մարժայով փոխհատուցման հարցը կքննարկվի համապատասխան բաժանորդներին էլեկտրական ցանցին միացնելուց և նրանց հետ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելուց հետո,

   բ) հաշվի առնելով, որ նոր սպառողների էլեկտրական ցանցին միացման ուղղությամբ իրականացված 16,2 մլն դրամի ներդրումները նախորդ տարիների ընթացքում արդեն իսկ ներառվել են սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում՝ էլեկտրական ցանցին միացված լինելու հիմքով, ուստի դրանք չեն ներառվել 2015 թվականի սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում,

2. տարբեր լարման ցանցերում տեղակայված սարքավորումների (ՇՉՕ, ՅԱՌՎ, ՌԼՆԴ, ՎՌՈՒ, ՇՌՍ, ԿՍՕ, ԼՏԵ և ՏՄ) ուղղությամբ իրականացված

ներդրումներից շուկայական գների մոնիթորինգի արդյունքում նվազեցվել է 90,1 մլն դրամ (Բաժին 4.1),

3. տեղակայված էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների ձեռքբերման գների մոնիթորինգի արդյունքում փաստացի իրականացված ներդրումներից նվազեցվել է 23,0 մլն դրամ (Բաժին 4.1): 0,3 մլն դրամ նվազեցվել է ձեռք բերված բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներին ներկայացվող՝ ՀՀ էներգետիկայի նախարարի 1999 թվականի հունիսի 22-ի հրամանի 6.9 կետի, տեխնիկական պահանջները չբավարարելու պատճառով: Եվս 1,9 մլն դրամ նվազեցվել է էլեկտրաէներգիայի ինդուկցիոն հաշվիչների փոխարինման ուղղությամբ իրականացված ներդրումներից՝ չհամաձայնեցված լինելու հիմքով:
4. տեղակայված հաշվիչների արկղերի շուկայական գների ուսումնասիրության և ընկերության ձեռքբերման գների համադրության արդյունքում՝ կատարված 103,1 մլն դրամի ներդրումներից նվազեցվել է 23,7 մլն դրամ: (Բաժին 4.1),
5. սկզբնական փաստաթղթերի (կատարողական ակտերի) ուսումնասիրության արդյունքում սեփական ուժերով և կապալառու կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքի շուկայական գների գերազանցման պատճառով ներդրումների ծավալից նվազեցվել է 65,4 մլն դրամ (Բաժին 4.2),
6. նախագծային ծախսումների ուղղությամբ 28,8 մլն դրամ նվազեցվել է նախագծային աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքից (Բաժին 4.2): Եվս 13,5 մլն դրամի ծախսումներ նվազեցվել է նախագծերի հետ կապված աշխատանքներ չիրականացնելու կամ մասնակի (մինչև 30%) իրականացնելու հիմքով (Բաժին 4.2): Նշված 13,5 մլն դրամի ներդրումները Ընկերության սակագնային մարժայով փոխհատուցելու հարցը կքննարկվի դրանք լիցենզավորված գործունեությանը մասնակցելուց հետո,
7. աշխատանքի վճարման գծով իրականացված ծախսումներից 235,4 մլն դրամը նվազեցվել է սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, քանի որ Ընկերության աշխատակիցների

աշխատավարձերն արդեն իսկ ամբողջությամբ ներառված են սակագնային մարժայի ծախսային հոդվածներում,

8. փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվությունում առկա են 132,1 մլն դրամի աշխատանքներ, որոնք ընթացիկ բնույթի են և ներառված են սակագնային մարժայի ծախսային հոդվածներում: Ուստի այս ծավալը նույնպես նվազեցվել է:
9. սպասարկման որակի բարելավման ուղղությամբ կատարված 6(10)-0,4 կՎ լարման մալուխային և օդային գծերի վերակառուցման աշխատանքներում ներառվել են աշխատանքներ, որոնք համաձայն Ընկերության 2012 թվականի հունվարի 20-ի 04ՎՍ-05/182 գրությամբ ներկայացված 6(10)-0,4 կՎ լարման օդային և մալուխային գծերի կապիտալ ծախսերի ճանաչման հայտանիշների՝ պետք է ձևակերպվեին որպես ընթացիկ ծախսեր: Դրանք են մալուխային գծերի մինչև 50մ հատվածի փոխարինման աշխատանքները, իսկ օդային գծերի համար՝ մինչև 200 մ երկարությամբ գծի նորոգման կամ մինչև 5 հենասյան փոխարինման աշխատանքները: Այս ուղղությամբ նվազեցվող ներդրումները կազմել են 30,7 մլն դրամ.
10. նոր սպառողների միացման նպատակով գանձված միացման վճարները՝ 601,1 մլն դրամ արժեքով ևս նվազեցվել են սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալից.
11. իրականացվել է նաև Հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է շուրջ 117,9 մլն դրամով, որից՝

ա) 0,4 կՎ լարման մալուխային գծերի վերակառուցում ենթաուղղությամբ՝ 26,1 մլն դրամով,

բ) 6(10) կՎ լարման օդային գծերի վերակառուցում ենթաուղղությամբ՝ 43,0 մլն դրամով,

գ) 110 կՎ լարման օդային գծերի վերակառուցում ենթաուղղությամբ՝ 4,3 մլն դրամով,

ե) էլեկտրական էներգիայի հաշվառման համակարգի ավտոմատացում 35-110 և 0,4-10 կՎ լարման ցանցերում ենթաուղղությամբ՝ 39,8 մլն դրամով,

զ) նախորդ ժամանակահատվածում ներդրումային ծրագրից դուրս իրականացված ներդրումների ուղղությամբ՝ 4,7 մլն դրամով:

Բացի վերը նշվածը, Ընկերությունը չի կատարել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի №222Ա որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույթը՝ համաձայն որի Ընկերությունը 200,0 մլն դրամի աշխատանքներ պետք է իրականացներ բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրամատակարարման ցանցի բարելավման ենթաուղղությամբ և ամբողջությամբ ավարտեր սպասարկման որակի բարելավմանն ուղղված թվով 36 հասցեական աշխատանքներ: Հաշվի առնելով, որ նշված աշխատանքներն ամբողջությամբ չեն ավարտվել, Ներդրումային ծրագրի բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներից նվազեցվել է 298,9 մլն դրամ: Այս ներդրումները Ընկերության սակագնային մարժայով կփոխհատուցվեն վերը նշված որոշման դրույթը ամբողջությամբ կատարելու դեպքում:

5.2 Անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

Ընկերության կողմից 2015 թվականի ընթացքում անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով կատարված 42,7 մլն դրամի շրջանակներում շահագործման են հանձնվել թվով 290 աշխատանքներ: Այս աշխատանքներից՝ 14,7 մլն դրամի աշխատանքները ներառված են սակագնային մարժայի ծախսային հոդվածներում (Բաժին 5.1.9) և նվազեցվել են սկագնային

մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալից: Անհետաձգելի աշխատանքների ընդունելի մասից ևս 6,1 մլն դրամ նվազեցվել է սարքավորումների շուկայական գների մոնիթորինգի արդյունքում (Բաժին 4.1), իսկ 1,3 մլն դրամը աշխատանքի վճարման գծով իրականացված ծախսումներից:

Արդյունքում՝ ներդրումային ծրագրի շրջանակներից դուրս իրականացված անհետաձգելի աշխատանքներից 20,6 մլն դրամի ներդրումներ ներառվել են սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

5.3 Լուծարված հիմնական միջոցներից նվազեցումներ

Համաձայն հանձնաժողով ներկայացված տեղեկատվության [Տեղեկատվություն 6] Ընկերությունը 2015 թվականի ընթացքում կարգավորվող գործունեության մասով լուծարել է 41,9 մլն դրամի հիմնական միոցներ, որից 30,7 մլն դրամի նյութեր և այլ պիտանի դետալներ ընդգրկվել են կապիտալացվող աշխատանքներում:

Մասնավորապես 2015 թվականի ընթացքում Ընկերությունը լուծարել է 106 հատ 10 կՎ ուժային տրանսֆորմատոր, որոնցից ստացված պիտանի նյութերի արժեքը կազմել է ընդամենը 2,6 մլն դրամ, իսկ 2 ուժային տրանսֆորմատորներից ընդհանրապես օգտակար նյութեր չեն ստացվել: Եվս 559 6(10)-04 կՎ օդային գծերի լուծարումից ստացված օգտակար նյութերի արժեքը կազմել է 3,1 մլն դրամ: Հարկ է նշել, որ, նույնիսկ նշված հիմնական միջոցների (օդային գծեր, տրանսֆորմատորներ և այլն) առկա մետաղյա ջարդոնի իրացման գինը զգալի գերազանցում է դրանցից ստացված նյութերի արժեքը, իսկ օրինակ գունավոր մետաղներ պարունակող տրանսֆորմատորների և այլ սարքավորումների զրոյական արժեքով լուծարումը լրացուցիչ մեկնաբանության կարիք ունի:

Կապիտալացվող աշխատանքներում ընդգրկված 30,7 մլն դրամը ևս նվազեցվել է սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալից:

5.4 Սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով մոնիթորինգի արդյունքները, ստորև՝ աղյուսակ 5-ում ներկայացված է Ընկերության կողմից 2015 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը:

Աղյուսակ 5
(մլն դրամ)

1	2015 թվականի ընթացքում իրականացված ներդրումների ընդհանուր ծավալը	**6 342.0**
2	2015 թվականի ընթացքում ավարտված ներդրումների ծավալը	**5 508.2**
3	Իրականացված ներդրումներից նվազեցման ենթակա ներդրումները, այդ թվում՝	**1 978.2**
3.1	Վերլուծության արդյունքում նվազեցված ներդրումներ	**1 047.4**
3.1.1	Ապրանքների և ծառայությունների շուկայական գների մոնիթորինգի արդյունքում իրականացված նվազեցումներ	**233.2**
3.1.1.1	*Տեղակայման ենթակա սարքավորումների և ապրանքների արժեքից (շուկայական գները գերազանցելու պատճառով)*	***139.0***
3.1.1.2	*Սկզբնական փաստաթղթերի (կատարողական ակտերի) ուսումնասիրության արդյունքում իրականացված նվազեցումներ*	***65.4***
3.1.1.3	*Նախագծային աշխատանքներ իրականացնող ընկերությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքից*	***28.8***
3.1.2	Ընթացիկ բնույթի աշխատանքների ուղղությամբ իրականացված ծախսումներից	**132.1**
3.1.3	0,4-6(10) կՎ լարման օդային և մալուխային գծերի վերակառուցման (մինչև 0,5 մլն դրամ արժողությամբ) աշխատանքներից	**30.7**
3.1.4	Սակագնով փոխհատուցված աշխատանքի վճարման գծով ծախսումներից	**235.4**
3.1.5*	Լիցենզավորված գործունեությանը չմասնակցող նախագծային աշխատանքներից	**13.5**
3.1.6*	Նոր սպառողների էլեկտրատեղակայանքները ցանցին միացնելուն ուղղված ներդրումներից՝ չմիացված բաժանորդների մասով	**268.5**

3.1.7	Նոր սպառողների էլեկտրատեղակայանքները ցանցին միացնելուն ուղղված և նախորդ ժամանակահատվածում փոխհատուցված ներդրումներ	16.2
3.1.8	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	117.9
3.2**	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի №222Ա որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետը չկատարելու պատճառով	298.9
3.3	Լուծարված հիմնական միջոցներ՝ ընդգրկված կապիտալ ներդրումներում	30.7
3.4	Նոր բաժանորդների միացման համար գանձված միացման վճարներից	601.1
4	**2015 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**	**3 530.0**

* Լիցենզավորված գործունեությանը մասնակցելու համապատասխան հիմնավորումներ ներկայացնելու դեպքում իրականացված աշխատանքները կներառվեն սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալում:

** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի №222Ա որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույթը ամբողջությամբ կատարելու դեպքում իրականացված ներդրումները կներառվեն սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընկերության 2015 թվականի ներդրումային ծրագիրը կատարվել է 65,4%-ով: Սպառողների սպասարկման որակի բարելավման ուղղությամբ ներդրումների իրականացման ցուցանիշը կազմել է 58,8%: Հարկ է նշել, որ Ընկերության կողմից 2014-2015 թվականներին պատշաճ մոտեցում չի ցուցաբերվել ներդրումների առաջնահերթության հարցում: 2015 թվականի Ներդրումային ծրագրի N1 և N2 հավելվածներով նախատեսված 36 հասցեական աշխատանքներից իրականացվել են ընդամենը 4 աշխատանք:
2. Ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված ֆինանսական հաշվետվությունների համաձայն, վերջինիս անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեքը 2015 թվականի սկզբին կազմել է 3 641,9 մլն դրամ: Տարվա ընթացքում այն ավելացել է 120,8 մլն դրամով՝ տարեվերջին կազմելով 3 762,8 մլն դրամ, կամ շահագործման հանձնված հիմնական միջոցների արժեքի (5 508,2 մլն դրամ) շուրջ 68,3%-ը: Չնայած այն հանգամանքին, որ նշված անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների ծավալը 2014-2015 թվականներին զգալի նվազել է 2013 թվականի համեմատությամբ, անհրաժեշտ է հետևողականորեն շարունակել նշված ակտիվների ավարտման և շահագործման հանձնման գործընթացը, որը կապահովի դրանց ստեղծման նպատակով իրականացված արդյունավետ ներդրումների ներառումը սակագնային մարժայի հաշվարկում:
3. 2015 թվականի ընթացքում 0,4 և 6(10) կՎ լարման ցանցերում հրաժարումների քանակը 2014 թվականի հետ համեմատ աճել է 36,5 %-ով: Միևնույն ժամանակ 1 բաժանորդի հաշվով հրաժարումների միջին հաճախությունը և տևողությունը ևս վատթարացել է համապատասխանաբար 10,3% և 18,6%-ով: Բաժանորդների հոսանքազրկումների վերականգնման միջին տևողությունը 2014 թվականի համեմատ (3,0 ժամ/ընդհատում) նվազել է՝ կազմելով 2,98 ընդհատում/ժամ:
4. Ընկերության կողմից բավարար միջոցներ չեն հատակացվել մատակարարվող էլեկտրաէներգիայի թույլատրելի սահմաններից լարման շեղման միջին

տարեկան հաճախության և տևողության կրճատմանն ուղղությամբ՝ նախատեսված 111,1 մլն դրամից իրականացվել են ընդանմենը 28,3 մլն դրամի ներդրումներ: Այս ցուցանիշները գրեթե ողջ ՀՀ տարածքում վատթարացել են:

5. 2015 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին են միացվել 2 961 նոր սպառողներ: Նոր սպառողների միացման նպատակով 2015 թվականին փաստացի շահագործման են հանձնվել 2 837,6 մլն դրամի հիմնական միջոցներ: Սակայն հարկ է նշել, որ այս ծավալում 268,5 մլն դրամի հիմնական միջոցները դեռևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, քանի որ դրանց իրականացման արդյունքում էլեկտրական ցանցին նոր բաժանորդներ չեն միացել (բաժանորդներին մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ չի ներկայացվել): Արդյունքում ինչպես և սույն եզրակացության 2-րդ կետում նշված անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների դեպքում փաստացի իրականացված ներդրումները չեն ներառվում սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

6. Ընկերության կողմից ձեռք բերված սարքավորումների և ապրանքների գների մոնիթորինգը ցույց է տալիս, որ գնումների ոչ արդյունավետ կազմակերպման արդյունքում դրանց գները էականորեն գերազանցում են շուկայականը՝ շուրջ 24,4%, իսկ որոշ դեպքերում, օրինակ ՇՕ-70 վահանների ձեռքբերում, գերազանցումը հասնում է 51%-ի:

Իսկ կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների և ծառայությունների սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց արժեքը մոտ 35,5%-ով գերազանցում են շուկայական գները:

Նշվածը հետևանք է գնումների գործընթացի անարդյունավետ կազմակերպման, և այն խոչընդոտների, որոնց արդյունքում արտաքին շուկաներում Ընկերության պահանջարկին համապատասխան ապրանքներ արտադրող կազմակերպությունները Ընկերության կողմից իրականացվող մրցույթներին հիմնականում չեն մասնակցում: Միևնույն ժամանակ, նյութերի և սարքավորումների մի մասը ձեռք է բերվում ոչ թե Ընկերության, այլ

կապալառու կազմակերպությունների կողմից, ինչն իր հերթին հանգեցնում է ապրանքների՝ բարձր գներով ձեռքբերմանը:

7. Շահագործման հանձնված հիմնական միջոցներից Ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվել են 6 342,1 (ներառյալ անհետաձգելի և Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն համայնքում իրականացված աշխատանքները) մլն դրամի ներդրումներ, որից 812,0 (ընդհանուրի 12,8%-ը) մլն դրամի ներդրումները համարվել են ոչ արդյունավետ կամ դեռևս լիցենզավորված գործունեությանը չմասնակցող և չեն ներառվել սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում: Հարկ է նշել, որ ներդրումներից նվազեցումները 2014 թվականի համեմատ նվազել են 21,8%-ով (2014 թվականին՝ 34,6%): Ավարտված ներդրումների ևս 5,4%-ը նվազեցվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի №222Ա որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույթը չկատարելու պատճառով՝ համաձայն որի Ընկերությունը 200,0 մլն դրամի աշխատանքներ պետք է իրականացներ բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրամատակարարման ցանցի բարելավման ենթաուղղությամբ և ամբողջությամբ ավարտեր սպասարկման որակի բարելավմանն ուղղված թվով 36 հասցեական աշխատանքներ: Ընկերության կողմից անհրաժեշտ է ավելի գործուն միջոցառումներ ձեռնարկել Հանձնաժողովի կողմից մատնանշված թերությունները և խախտումները վերացնելու ուղղությամբ: Արդյունքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն կմեծացնի իր կողմից իրականացված ներդրումների դիմաց վերադարձ ստանալու հնարավորությունը և այդ գումարները արդյունավետ ծախսելու պարագայում կօգտվի հնարավոր տեխնիկական և տնտեսական այլ օգուտներից: Հարկ է նաև փաստել, որ այդ հանգամանքը իր դրական ազդեցությունը կունենա նաև սպառողների սպասարկման որակի վրա և բաշխման համակարգի բնականոն զարգացման վրա: Ուստի կարծում ենք Ընկերությունը նոր ջանքեր պետք է գործադրի իր կառավարման արդյունավետությունը բարձրացնելու և անարդյունավետ ծախսերը բացառելու նպատակով:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 8-ի №222Ա որոշումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2015 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին»

Որոշում 2 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի №446Ա որոշումը «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 8-ի №222Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

Հաշվետվություն 1- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականին փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին ընկերության 2016 թվականի ապրիլի 28-ի №04-ԿՀ-05/1470 գրությամբ ներկայացված հաշվետվություն

Տեղեկատվություն 1- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականին նոր սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման նպատակով իրականացվող ծախսումների վերաբերյալ տեղեկատվություն

Տեղեկատվություն 2- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականին նոր սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն

Տեղեկատվություն 3- Սպառողների հոսանքազրկումների քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշների 2015 թվականի տեղեկատվական բազա (http://psrc.am/am/sectors/electric/service-quality-indicators)

Տեղեկատվություն 4- Սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշների 2015 թվականի տեղեկատվական բազա (http://psrc.am/am/sectors/electric/service-quality-indicators)

Տեղեկատվություն 5- Էլեկտրակայանքների հուսալիության փաստացի ցուցանիշների 2015 թվականի տեղեկատվական բազա (http://psrc.am/am/sectors/electric/service-quality-indicators)

Տեղեկատվություն 6- Տեղեկատվություն լուծարված հիմնական միջոցների մասին